

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
«ՎԱՆԱՋՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հաստատված է ամբիոնի նիստում

\_\_\_\_\_ Պատմության \_\_\_\_\_  
ամբիոնի անվանումը

Ամբիոնի վարիչ Ֆելիքս Վազգենի Մովսիսյան /Ա.Ա.Հ/

Արձանագրություն № 15

« 23 » մայիսի, 2024 թ.

Պ/Բ - 031 - ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ-3

Պ/Բ - 031 - ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ-4

**ԴԱՍԸՆԹԱՅԻ**

Դասիչ, դասընթացի անվանում

**ՌՈՒՄՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՓԱԹԵԹ**

Մասնագիտություն՝

022201.00.6 - Պատմություն

/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

Կրթական ծրագիր՝

022201.01.6 - Պատմություն

/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

Որակավորման աստիճան՝

Բակալավր

/բակալավր, մագիստրատուրա/

Ամբիոն՝

Պատմության

/ամբիոնի լրիվ անվանումը/

Ուսուցման ձևը՝

Առկա, հեռակա

/առկա, հեռակա/

Կուրս/կիսամյակ

3-րդ, 5,6-րդ կիսամյակ

Դասախոս(ներ)՝

Սամվել Աղաջանյան

/անուն, ազգանուն/

Էլ. հասցե/ներ s.aghajanyan.71@yandex.ru

Վանաձոր- 2024թ.

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

1.	Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում .....	3
2.	Դասընթացի նպատակը և խնդիրները .....	3
3.	Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները .....	4
4.	Դասընթացի կրթական վերջնարդյունքները .....	...
5.	Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների .....	...
6.	Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը .....	...
7.	Ուսումնական աշխատանքները տեսակները .....	...
8.	Դասավանդման մեթոդներ.....	...
9.	Ուսումնառության մեթոդները .....	...
10.	Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը .....	...
11.	Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ.....	...
12.	Դասընթացի ուսումնամեթոդական քարտ.....	...
	12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ	.
	12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ.....	...
	12.3. Լաբորատոր աշխատանքների ուսումնամեթոդական քարտ.....	...
	12.4. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ .....	...
13.	Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում.....	...
14.	Գնահատում.....	...
	14.1. Ուսանողների գիտելիքների ստուգում.....	...
	14.2. Հարցաշար.....	...
	14.3. Գնահատման չափանիշներ.....	...
15.	Դասընթացի համառոտ նկարագրիչ.....	...

## ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

### 1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում<sup>1</sup>

«Ռուսաստանի պատմություն- 3-4» դասընթացը կարևորվում է պատմագիտության բնագավառում մասնագետների պատրաստման գործընթացում, ներառված է 022201.01.6 կրթական ծրագրի ուսումնական պլանի «Հատուկ մասնագիտական» կրթամասում: «Ռուսաստանի պատմություն» առարկայի նոր շրջանը ապագա մասնագետներին ծանոթացնում է Ռուսաստանի պատմության 1900-2000-ական թվականներն ընդգրկող կարևորագույն հարցերին: Երկրի քաղաքական պատմությանը գույճընթաց ուսումնասիրվում են նաև սոցիալ-տնտեսական, գաղափարական և մշակութային հարցերը:

Ռուսաստանի այս շրջանի պատմության ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ծանոթանալու այն հիմնախնդիրներին, որոնց լուսաբանումն առնչվում է նաև հայ ժողովրդի պատմության հետ: Արևելյան Հայաստանը՝ գտնվելով ռուսական կայսրության կազմում, որպես ազգային ծայրամասային շրջան, լիովին կամ մասնակիորեն իր վրա կրում էր այն սոցիալ-տնտեսական, քաղաքական և գաղափարական գործընթացների ազդեցությունը, որոնք տեղի էին ունենում մետրոպոլիայում:

Այս ժամանակաշրջանում Կայսրությունում տեղի ունեցած պատմական շատ երևույթներ իրենց նշանակությամբ դուրս են եկել Ռուսաստանի սահմաններից և իրեց ազդեցությունն են թողել տարածաշրջանի երկրների վրա: Այս տեսանկյունից առարկայի ուսումնասիրությունն ուսանողին թույլ է տալիս պատմական շատ հիմնախնդիրներ վերլուծության ենթարկել նաև Ռուսաստանի պատմության օրինակով:

Ռուսաստանի նորագույն շրջանի պատմության դասընթացի ծրագիրը նպատակ ունի պատմության ֆակուլտետի III կուրսի ուսանողներին նորովի ներկայացնելու ցարական կայսրության կործանման, փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխության պատմությունը, հոկտեմբերյան հեղաշրջման և կոմունիստական ռեժիմի շուրջ 70-ամյա գործունեությունը, ինչպես նաև Ռուսաստանի դաշնության անկախության շրջանի պատմությունը:

Ծրագրով նախատեսված է Խորհրդային Ռուսաստանի քաղաքացիական պատերազմի, օտարերկրյա ռազմական արշավանքի, նրա քաղաքական, տնտեսական դրության նկարագիրը:

---

<sup>1</sup> Ներկայացվում է դասընթացի կարևորությունը տվյալ կրթական ծրագրի խնդիրների լուծման հարցում և տեղը ուսումնական պլանում ըստ կրթաբլոկների

Մեծ էր Խորհրդային Ռուսաստանի որոշիչ դերը ԽՍՀՄ-ի կազմավորման, ներքին ու արտաքին քաղաքականության, կոլեկտիվացման, Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի և հետպատերազմյան ժամանակահատվածի քաղաքական, տնտեսական վերելքի գործում:

Սակայն դասընթացի յուրացումը կապված է մի շարք դժվարությունների հետ. հայերեն նոր գրականություն չկա, իսկ եղածը՝ լիովին ռուսերեն է, որն ուսանողներին դժվարամատչելի է:

## 2. Դասընթացի նպատակը և խնդիրները.

### 2.1. Դասընթացի նպատակն է.

- Ռուսաստանի պատմության զարգացման օրինաչափությունների վերաբերյալ գիտելիքների փոխանցում ուսանողներին:
- Գիտական չափանիշների հետազոտության շրջանակներում հմտությունների և կարողությունների ձևավորում ուսանողների մոտ:
- Պատմական համեմատության և վերլուծելու ունակությունների ձեռքբերում ուսանողների կողմից:
- Պատմական իրադարձությունները վերլուծելու կարողությունների ձևավորում տարբեր իրավիճակներում:

### 2.2. Դասընթացի խնդիրներն են.

- Մովորեցնել XX դարի Ռուսաստանի պատմության տեսական հիմքերը:
- Բացատրել Ռուսաստանի զարգացման օրինաչափությունները:
- Ամրապնդել ուսանողների կողմից ձեռքբերված տեսական գիտելիքները գործնական իրավիճակային խնդիրներով:
- Մովորեցնել ուսանողներին կատարել ինքնուրույն գիտական հետազոտություններ և կատարել եզրահանգումներ ըստ արդյունքների:
- Մովորեցնել ուսանողներին վերլուծել Ռուսաստանի պատմական զարգացման առանձնահատկությունները Հայոց և համաշխարհային պատմության համատեքստում:

## 3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները

«Ռուսաստանի պատմության -3-4» դասընթացին մասնակցելու կարևոր նախապայման է ուսանողների գիտելիքների և հմտությունների առկայությունը «Պատմություն» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրում ուսուցանվող «Ռուսաստանի պատմություն -1-2», «Միջին դարերի պատմություն», «Նոր պատմություն» դասընթացներից:

## 4. Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունք(ներ)ը<sup>2</sup> և /կամ կոմպետենցիաները.

«Ռուսաստանի պատմություն» դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողի ակնկալվող վերջնարդյունքներն են.

<sup>2</sup> <http://www.vsu.am/karg/ararkayakan-nkaragir-17.pdf>

Լրացվում է «Առարկայի նկարագրի մշակման ռազմավարության» կոմպետենցիաների ցանկին համապատասխան:

1. իմանա պատմության ուսումնասիրության տեսական հիմունքները,
2. իմանա պատմության ուսումնասիրման մեթոդական հիմքները
3. կարողանա ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում,
4. տիրապետի պատմական հետազոտության մեթոդներին,
5. կարողանա տեսական գիտելիքները կիրառելով հասկանալ պատմական զարգացման օրինաչափությունները:
6. կարողանա հետազոտությունների շրջանակներում կատարել ինքնուրույն եզրահանգումներ:

**Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կբերի հետևյալ կոմպետենցիաները.**

**Ա)Ընդհանրական կոմպետենցիաներ**

**Գործիքային կոմպետենցիաներ (ԳԿ)՝**

- ԳԿ1 վերլուծելու և սինթեզելու ունակություն,
- ԳԿ4 մասնագիտական ոլորտի գիտելիքների հիմունքներ,
- ԳԿ9 խնդիրների լուծում,
- ԳԿ10 որոշումների ընդունում:

**Համակարգային կոմպետենցիաներ (ՀԳԿ)՝**

- ՀԳԿ1 գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն,
- ՀԳԿ2 հետազոտություններ կատարելու ունակություններ,
- ՀԳԿ3 սովորելու ունակություն,
- ՀԳԿ8 ինքնուրույն աշխատելու ունակություն,

**Բ)Առարկայական (մասնագիտական) կոմպետենցիաներ (ԱԿ)**

- ԱԿ2 հստակ հաղորդել ստացված հենքային գիտելիքները,
- ԱԿ4 ցուցաբերել առարկայի ընդհանուր կառուցվածքի և առանձին մասերի միջև կապերի իմացություն,
- ԱԿ6 կիրառել տվյալ առարկային բնորոշ մեթոդները,
- ԱԿ11 տիրապետեն ինքնուրույն հետազոտության մեթոդներին և կարողանան մեկնաբանել հետազոտության արդյունքները,
- ԱԿ14 տիրապետեն տվյալ մասնագիտական մակարդակում պահանջվող կոմպետենցիաներին:

**5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների<sup>3</sup>.**

«Ռուսաստանի պատմություն -3-4» դասընթացից ձեռք բերված գիտելիքները և հմտությունները շրջանավարտը կարող է կիրառել պատմաբանի մասնագիտական գործունեության ընթացքում, նաև ասպիրանտուրայում կրթությունը շարունակելու և պատմագիտության բնագավառում գիտական հետազոտություններ կատարելու նպատակով:

**6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը**

Չափանիշ	Առկա ուսուցման համակարգ	Հեռակա ուսուցման համակարգ
Դասընթացի ընդհանուր աշխատատարությունը (կրեդիտ /ընդհանուր ժամաքանակ)	4+4 կրեդիտ/ 120+120 ժամ	4+4 կրեդիտ/ 120+120 ժամ

<sup>3</sup> Նշվում է, թե տվյալ դասընթացի յուրացման, ամփոփման արդյունքում ձեռքբերված գիտելիքները, հմտությունները և կարողությունները աշխատաշուկայի որ բնագավառներում և ոլորտներում կարող է շրջանավարտը կիրառել

Աշխատանքի տեսակը	Ժամաքանակ	Ժամաքանակ
Դասախոսություն	38+38	10+10
Գործնական աշխատանք		
Մեմինար պարապմունք	14+14	6+6
Լաբորատոր աշխատանք		
Ինքնուրույն աշխատանք	68+68	104+104
<b>Ընդամենը</b>	120+120	120+120
Ստուգման ձևը (ստուգարք/ ընթացիկ քննություն/ հանրագումարային քննություն)	քննություն	քննություն

**7. Ուսումնական աշխատանքների տեսակները<sup>4</sup>.**

- **Դասախոսությունը** դասախոսի կողմից դասընթացի ծրագրի շրջանակներում գիտական-տեղեկատվական թեմայի վերաբերյալ տրամաբանորեն կառուցված, հետևողական ու պարզ խոսքի շարադրանքն է, որի նպատակն է ուսանողին տալ համապարփակ գիտելիքներ: Դասախոսը վերլուծում, մեկնաբանում է թեմայի առավել կարևոր, դժվար ընկալելի, հանգուցային հարցերը: Դասախոսությունը ուսանողի առջև ուրվագծվող գիտական մի ճանապարհ է, որը նա կարող է միայն անցնել գիտական գրականության ընթերցանության, ուսումնական բնույթի այլ պարապմունքների և ինքնուրույն կատարած աշխատանքների շնորհիվ: Դասախոսը պետք է խթանի ուսանողի ակտիվ իմացաբանական գործունեությունը, նպաստի նրանց ստեղծագործական մտածողության ձևավորմանը: Ուսանողը նույնպես պետք է լինի դասախոսության ակտիվ մասնակից: Ուսանողը դասախոսությանը ներկայանալուց առաջ պետք է ծանոթացած լինի տվյալ դասին ներկայացվող թեմային, որպեսզի կարողանա մասնակցել ուսումնական գործընթացին:
- **Մեմինար պարապմունքները** խմբային պարապմունքների հիմնական տեսակներից է, որի ընթացքում ուսանողը սովորում է բանավոր շարադրել նյութը, պաշտպանել իր տեսակետները և եզրահանգումները: Մեմինարի ընթացքում ուսանողները քննարկում, պատասխանում են թեման, զեկույցները և ռեֆերատները, որոնք հանձնարարել է դասախոսը:  
Մեմինարին պատրաստվելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել հիմնական և լրացուցիչ գրականություն տվյալ թեմայով: Գրականության ուսումնասիրությունից և համառոտագրումից հետո պետք է կազմել պլան՝ բանավոր պատասխանի համար, ապա մտածել էլույթի բովանդակության հարցադրումների և պատասխանների մասին:
- **Ինքնուրույն աշխատանքը** ուսանողների ուսումնական, գիտահետազոտական աշխատանքն է, որն իրականացվում է դասախոսի առաջադրանքով և մեթոդական ղեկավարությամբ, բայց առանց նրա անմիջական ղեկավարության:  
Ինքնուրույն աշխատանքի տեսակներն են<sup>5</sup>

<sup>4</sup> Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

<sup>5</sup> Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

- **Ռեֆլեքսատ** – ուսանողների ինքնուրույն գրավոր, որտեղ ուսանողը շարադրում է որևէ հարցի կամ թեմայի էությունը՝ հենվելով գրական աղբյուրների վրա (դասագրքեր, ձեռնարկներ և այլն):
- **Գործարար խաղեր** – պայմանական իրավիճակներում սոցիալ-տնտեսական համակարգերի և մարդկանց մասնագիտական գործունեության կառավարման գործընթացների նմանակերծային մոդելավորում՝ առաջացող հիմնախնդիրների ուսումնասիրման և լուծման նպատակով:
- **Էսսե** – արձակ ստեղծագործություն՝ քննադատության և լրագրության ժանրի որևէ խնդրի ազատ վերլուծություն:
- **Կլոր սեղան** – ինքնուրույն աշխատանքի ձևին բնորոշ է թեմատիկ բանավեճի համադրումը խմբային աշխատանքի հետ:
- **Կոնկրետ իրավիճակների վերլուծություն** – ուսանողների ակտիվ գործունեության կազմակերպման ամենարդյունավետ և տարածված ձևերից մեկն է, որը զարգացնում է մասնագիտական և կեցությանը վերաբերող տարբեր հարցերի վերլուծության կարողությունը:
- **Նախագծերի մեթոդ** – ուսումնաձանաչողական, ստեղծագործական կամ խաղային համատեղ գործունեության տեսակ է, սովորող-գործընկերների միջև, որոնք ունեն ընդհանուր նպատակ և համաձայնեցված միջոցներ՝ ուղղված որևէ խնդրի լուծման կամ որոշակի արդյունքի ձևակերպման:
- **Հարցի նախապատրաստման մոդել** – կամավորության սկզբունքով ընտրված ուսանողն իր նախընտրած հակիրճ ձևով նախապատրաստում է տվյալ առարկայից քննության կամ ստուգարքի հարցերի իր պատասխանների փաթեթը: Քննությունից (ստուգարքից) 1 շաբաթ առաջ նա հանձնում է փաթեթը դասախոսին, որը ստուգում է այդ նյութերը և որոշում դրանց համապատասխանությունը տվյալ առարկայի բովանդակությանը:
- **Ինքնուրույն աշխատանք համացանցում** – նոր տեղեկատվական տեխնոլոգիաները կարող են օգտագործվել հետևյալ նպատակներով՝ համացանցում անհրաժեշտ տեղեկատվության որոնման համար, երկխոսություն համացանցում, թեմատիկ ցանցային էջերի օգտագործում:
- **Աշխատանքային տեսք** – նախատեսված է ուսանողների ինքնուրույն աշխատանքների համար և թույլ է տալիս գնահատել ուսումնական նյութի յուրացման աստիճանն ուսանողների կողմից:
- **Զեկույց** – որևէ գիտական կամ հետազոտական թեմայի շուրջ կատարած եզրակացությունների, ստացած արդյունքների ներկայացում ուսանողի կողմից:
- **Հարցազրույց** – վերահսկողության միջոց, որը կազմակերպվում է որպես հատուկ զրույց դասավանդողի և ուսանողների միջև՝ կապված այնպիսի թեմայի հետ ինչպիսին կարգապահությունն է, և նախատեսված է հստակեցնել ուսանողների գիտելիքների շրջանակը կոնկրետ թեմայի, հարցի վերաբերյալ:

8. **Դասավանդման մեթոդներն են**<sup>6</sup> հիմնահարցային դասախոսություն, դասախոսություն-երկխոսություն, դասախոսություն-քննարկում, *թեմատիկ սեմինար*, սեմինար-բանավեճ, գործնական աշխատանք՝ անհատական աշխատանք, գործնական աշխատանք՝ խմբային աշխատանք, ուսուցում գործողությամբ (action learning), իրավիճակային խնդիրների վերլուծություն, գործարար խաղեր:

9. **Ուսումնառության մեթոդներն են**<sup>7</sup>՝ մտքերի քարտեզագրում, թիմային քննարկում, իրադրությունների վերլուծություն, ակգորիթմների և հրահանգների կազմում, աղյուսակների և դասակարգման համեմատման և համակարգման սխեմաների կազմում, փորձի/հետազոտության արդյունքների վերաբերյալ եզրակացության ներկայացում:

<sup>6</sup> Ներկայացված են օրինակներ: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

<sup>7</sup> Ներկայացված են օրինակներ: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը՝ ըստ բաժինների և թեմաների<sup>8</sup>.

h/h	Թեմա (բաժին)	Ուսումնական աշխատանքի ժամաքանակն ըստ տեսակների				
		դասախոսություն	սեմինար պարաօլոմներ	գործնական աշխատանք	լաբորատոր աշխատանք	Ինքնուրույն աշխատանք
1.	Ռուսաստանի ազգային կազմը և սոցիալական կառուցվածքը 20-րդ դարի սկզբին:	2				
2.	Ռուսաստանի տնտեսական զարգացումը 20-րդ դարի սկզբին:	2				
3.	Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին:	2				
4.	1905-1907թթ. Հեղափոխությունը Ռուսաստանում:	2				
5.	Ռուսական պետականության զարգացումը. բացարձակ միապետությունից դեպի դումայական միապետություն:	2				
6.	Ստոլիպինի բարեփոխումները:		2			
7.	Ռուսաստանի մասնակցությունն առաջին աշխարհամարտին:		2			
8.	Ռուսաստանի հոգևոր կյանքը 19-րդ դարի վերջին-20-րդ դարի սկզբին:		2			
		10	6			
	<b>2-րդ կիսամյակ</b>					
1.	Փետրվարյան հեղափոխությունը Ռուսաստանում: 1917թ. Հոկտեմբերյան հեղաշրջումը Ռուսաստանում:	2				
2.	Խորհրդային Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը 1917-1921թթ.:	1				

<sup>8</sup> Նման է օրացուցային պլանին



3.	Քաղաքացիական պատերազմը և օտարերկրյա ինտերվենցիան: ԽՍՀՄ կազմավորումը	1				
4.	Խորհրդային Ռուսաստանը ՆԷՊ-Ի տարիներին: Ինդուստրացման և կոլեկտիվացման քաղաքականությունը	1				
5.	Քաղաքական բռնությունները 30-ական թվականներին	1				
6.	ԽՍՀՄ միջազգային դրությունը 1930-ական թվականներին: Հայրենական Մեծ պատերազմը:	1				
7.	Ն. Ս. Խրուշչովի «ձնհալի» ժամանակաշրջանը	1				
8.	Ռուսաստանը 1970-1980-ական թվականներին:	1				
9.	Վերակառուցման քաղաքականությունը և ԽՍՀՄ փլուզումը:	1				
10.	ԽՍՀՄ-ի արտաքին քաղաքականությունը վերակառուցման ժամանակաշրջանում:		2			
11.	Ռուսաստանը հետխորհրդային շրջանում		2			
12.	Ռուսական մշակույթը 20-րդ դարում		2			
ԸՆԴԱՄԵՆԸ		10	6			

11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ

h/h	Անվանումը/հեղինակ	Հրատարակության տարի
<b>Պարտադիր գրականություն (ՊԳ)</b>		
1.	<b>Введение в современную российскую историю 1985-1991гг. Курс лекций. Барсенков А.С.</b>	2002
2.	<b>История отечества. С древнейших времен до наших дней. (Уч. для ссузов) Артемов В.В., Лубченков Ю.Н.</b>	2004
3.	<b>История России XX - начала XXI века. Под ред. Милова Л.В.</b>	2006

4.	История России XX - начала XXI вв. <i>Терещенко Ю.Я.</i>	2004
5.	История России. 1917–2009. <i>Барсенков А.С., Вдовин А.И.</i>	2010
6.	История России. XX век. <i>Валлиулин К.Б., Зарипова Р.К.</i>	2002
7.	История России XX столетия (Основные проблемы) <i>Поцелуев В.А.</i>	1997
8.	История России. XX век. Кн. 3. <i>Боханов А.Н., Горинов М.М., Дмитренко В.П.</i>	2001
9.	История России с древнейших времен до наших дней. <i>Морозова Л.Е., Боханов А.Н. и др.</i>	2016
10.	История России с древнейших времен до наших дней. <i>Под ред. Сахарова А.Н.</i>	2012
11.	История России с древнейших времен до наших дней. В 2-х томах. <i>Сахаров А.Н., Боханов А.Н., Шестаков В.А.</i>	2010
12.	История России 1861-1917. Кн. 2. <i>Федоров В.А.</i>	2000
13.	История советского государства. 1900—1991. <i>Верт Н.</i>	1992
14.	История Советской России. <i>Ратьковский И. С., Ходяков М. В.</i>	2001
15.	Курс советской истории, 1917-1940. Кн. 1. <i>Соколов А.К.</i>	1999
16.	Курс советской истории, 1941-1991. Кн. 2. <i>Соколов А.К., Тяжельникова В.С.</i>	1999
17.	Новейшая история России (1991-1997). <i>Рябкин С.П.</i>	1997
18.	Новейшая история России с начала XX в. и до сегодняшнего дня. <i>Шестаков В.А.</i>	2008
19.	Новейшая отечественная история. XX - начало XXI века. В 2-х кн. <i>Под ред. Щагина Э.М.</i>	2005
20.	Отечественная история России новейшего времени. 1985-2005 гг. (Учебник) <i>Отв. ред. Безбородов А.Б.</i>	2007
21.	Власть в тротиловом эквиваленте. Наследие царя Бориса. <i>Полторанин М.Н.</i>	2010
<b>Григорий Григорьевич (ГГ)</b>		
1.	Романовы. Исторические портреты. (В 2-х томах.) <i>Под ред. А.Н. Сахарова.</i>	1997
2.	Россия под скипетром Романовых. 1613 - 1913	1990
3.	Великая Война и Февральская революция 1914-1917 годов. <i>Спиридович А.И.</i>	1962
4.	Ликвидация России. Кто помог красным победить в Гражданской войне. <i>Стариков Н.</i>	2010

5.	Гражданская война: белые и красные. <i>Митюрин Д.В.</i>	2004
6.	Гражданская история безумной войны. <i>Веллер М., Буровский А.</i>	2007
7.	Белое движение. Исторические портреты: Л.Г.Корнилов, А.И. Деникин, П.Н.Врангель и др. Сост. А.С. Кручинин	2006
8.	Государство и революция. <i>Шамбаров В.Е.</i>	2001
9.	ЧЕ-КА. Материалы по деятельности чрезвычайных комиссий.	1922
10.	Красный террор в России: 1918-1923. (1923-1924) <i>Мельгунов С.П.</i> (1879-1956)	1990
<b>Համացանցային տեղեկատվական պաշարներ (ՀՏՊ)/ Էլեկտրոնային աղբյուրներ (ԷԱ)</b>		
1.	<a href="https://www.youtube.com/watch?v=7jR3QgUGPcQ">https://www.youtube.com/watch?v=7jR3QgUGPcQ</a>	
2.	<a href="https://lifehacker.ru/knigi-po-istorii/">https://lifehacker.ru/knigi-po-istorii/</a>	
3.	<a href="https://www.google.com/search?sxsrf=ALiCzsZn4sP8-8">https://www.google.com/search?sxsrf=ALiCzsZn4sP8-8</a>	

## 12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ

### 12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ

h/h	Թեմա	Ուսումնասիրվող հարցեր	Ժամաքանակ	Գրականություն <sup>9</sup>
1.	Ռուսաստանի ազգային կազմը և սոցիալական կառուցվածքը 20-րդ դարի սկզբին:	Սոցիալական կառուցվածքի առանձնահատկությունները: XX դարի սկզբի սոցիալ-քաղաքական ճգնաժամը:	2	ՊԳ3, ՊԳ19
2.	Ռուսաստանի տնտեսական զարգացումը 20-րդ դարի սկզբին:	Տնտեսական զարգացման առանձնահատկությունները: Արդյունաբերությունը: Գյուղատնտեսությունը: Տրանսպորտը: Առևտուրը: Ֆինանսները:	2	ՊԳ3, ՊԳ19
3.	Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը 19-րդ դարի	Արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները: 1904-1905թթ. ռուս-ճապոնական	2	ՊԳ3, ՊԳ19

<sup>9</sup> Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, որ.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

	վերջին և 20-րդ դարի սկզբին:	պատերազմը: Եռյակ միության կազմավորումը: Ռուսաստանը և Բալկանյան ճգնաժամը:		
4.	Ռուսաստանի ներքին քաղաքականությունը դարերի սահմանագծին: 1905-1907թթ. Հեղափոխությունը Ռուսաստանում:	Բանվորական շարժումները: Գյուղացիական շարժումները: Դեմոկրատական մտավորականության շարժումները: Քաղաքական կուսակցությունները: Լիբերալ շարժումները: Ներքին քաղաքականությունը: Նիկոլայ II: 1905-1907թթ. հեղափոխությունը:	2	ՊԳ3, ՊԳ19
5.	Ռուսական պետականության զարգացումը. բացարձակ միապետությունից դեպի դումայական միապետություն:	Պետական դումաները (I, II, III, IV): Հունիսերեքյան քաղաքական համակարգը:	2	ՊԳ3, ՊԳ19
			10	
	<b>2-րդ կիսամյակ</b>			
1.	Փետրվարյան հեղափոխությունը Ռուսաստանում: 1917թ. Հոկտեմբերյան հեղաշրջումը Ռուսաստանում:	Փետրվարյան հեղափոխության նախադրյալները: Ներքին քաղաքական վիճակը երկրում 1916թ.-ի վերջերին: Հեղափոխական իրադրության ձևավորումը: Փետրվարյան հեղափոխությունը Ռուսաստանում: Երկիշխանության ձևավորումը: Հասարակական-քաղաքական դրությունը երկրում 1917թ. գարնանը: Ժամանակավոր կառավարության ներքին և արտաքին քաղաքականությունը 1917թ. փետրվար-մայիս ժամանակահատվածում: 1917թ. հուլիսյան իրադարձությունները: Կոռնիլովշինան և նրա հետևանքները: Իրավիճակը երկրում 1917թ. աշնանը: Հոկտեմբեր-նոյեմբերյան իրադարձությունները Պետրոգրադում և Մոսկվայում: Իշխանության բռնազավթումը բոլշևիկների կողմից: Բոլշևիկների տակտիկան 1917թ. աշնանը: Բոլշևիկյան զինված	2	ՊԳ3, ՊԳ19, ԼԳ3

		հեղաշրջումը Պետրոգրադում, Սովետների 2-րդ համագումարը: Կրասնովի և Կերենսկու արշավանքը Պետրոգրադ: Բոլշևիկների զինված ապստամբությունը Մոսկվայում:		
2.	Խորհրդային Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը 1917-1921թթ.:	Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը 1917-1921թթ.: Հաշտության դեկրետը: Բրեստի հաշտության պայմանագիրը և նրա հետևանքները: Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը, Վերսալ-վաշինգտոնյան սիստեմը: Անտանտի և ԱՄՆ-ի ռազմական ինտերվենցիան: Հարաբերությունները մերձբալթյան երկրների և Ֆինլանդիայի հետ:	1	ՊԳ3, ՊԳ19
3.	Քաղաքացիական պատերազմը և օտարերկրյա ինտերվենցիան: ԽՍՀՄ կազմավորումը	Քաղաքացիական պատերազմի պատճառները, սկիզբը: Կարմիր բանակի ձևավորումը: «Ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը: «Սպիտակ շարժումը»: Օտարերկրյան ռազմական ինտերվենցիան: Ռազմական գործողությունները 1918-1919թթ.: Ռազմական գործողությունների ավարտը: Կայսրության նախկին տարածքների վերամիավորման գործընթացի սկիզբը: ԽՍՀՄ-ի ստեղծման անհրաժեշտությունն ու առանձնահատկությունները: ԽՍՀՄ կազմավորումը: ԽՍՀՄ առաջին սահմանադրությունը:	1	ՊԳ3, ՊԳ19, ԼԳ4, ԼԳ5
4.	Խորհրդային Ռուսաստանը ՆԷՊ-ի տարիներին: Ինդուստրացման և կոլեկտիվացման քաղաքականությունը	Խորհրդային Ռուսաստանի զարգացումը ՆԷՊ-ի պայմաններում: ՌԽՖՍՀ նոր սահմանադրությունը: ՌԽՖՍՀ-ի վարչական բաժանումը: Առաջին հնգամյակը և ՆԷՊ-ի ավարտը: Ինդուստրացում: Գյուղատնտեսության կոլեկտիվացումը: ՀամԿ(բ)Կ Կենտկոմի որոշումը համատարած կոլեկտիվացման մասին: Կոլեկտիվացումը ՌԽՖՍՀ-ում: Շեղումներ կոլեկտիվացման ընթացքում և	2	ՊԳ3, ՊԳ19, ԼԳ10

		Կենսոկոմի նոր որոշումները: Տնտեսության և մշակույթի բնագավառի փոփոխությունները: 1936-1937թթ. «Մեծ ահաբեկչությունը»:		
5.	Քաղաքական բռնությունները 30-ական թվականներին	Անհատի պաշտամունքի ձևավորումը: ԽՍՀՄ պետական համակարգը: Ամբողջատիրոջության հաստատումը: Քաղաքական բռնությունները 1930-ական թվականներին:	2	ՊԳ3, ՊԳ19
6.	ԽՍՀՄ միջազգային դրությունը 1930-ական թվականներին: Հայրենական Մեծ պատերազմը:	Ֆաշիզմի վտանգը: Մյունխենի համաձայնագիրը և ԽՍՀՄ-ը: Խորհրդային նախաձեռնություններն ուղղված Եվրոպայում ֆաշիստական ագրեսիայի կանխմանը: ԽՍՀՄ-ի մոսկովյան բանակցությունները Անգլիայի և Ֆրանսիայի հետ: 1939թ. օգոստոսի 23-ի խորհրդագրմանական չհարձակման պայմանագիրը: Գաղտնի արձանագրությունը: Խորհրդա-ֆիննական պատերազմը և ԽՍՀՄ-ի տարածքային ընդարձակումը: Հայրենական Մեծ պատերազմի սկիզբը: Մոսկվայի ճակատամարտը: «Կայծակնային պատերազմի» պլանի ձախողումը: Խորհրդային զորքերի հակահարձակումը: Ստալինգրադի ճակատամարտը: Արմատական բեկումը պատերազմի ընթացքում: Պարտիզանական պայքարը: Թեհրանի խորհրդաժողովը: ԽՍՀՄ-ի տարածքի ազատագրումը և երկրորդ ճակատի բացումը: Յալթայի խորհրդաժողովը: Գերմանիայի պարտությունը և Հայրենական Մեծ պատերազմի ավարտը: Պոտսդամի խորհրդաժողովը: ԽՍՀՄ-ի մասնակցությունը Ճապոնիայի դեմ պատերազմին: Պատերազմի ռազմաքաղաքական արդյունքները:	2	ՊԳ3, ՊԳ19
7.	Ն. Ս. Խրուշչովի «ձնհալի» ժամանակաշրջանը	Ստալինի մահը: Անհատի պաշտամունքի դատապարտումը: Ն. Ս. Խրուշչովը ԽՄԿԿ Կենտկոմի	2	ՊԳ3, ՊԳ19

		առաջին քարտուղար: Նոր ընդդիմության գործունեությունը 1957թ.: ԽՄԿԿ XXI արտահերթ համագումարը: «Ձնհալի» փուլի ավարտը և 1964թ. հոկտեմբերի 14-ի ԽՄԿԿ Կենտկոմի պլենումը:		
8.	Ռուսաստանը 1970-1980-ական թվականներին:	Հասարակական-քաղաքական կյանքը: Լ. Ի. Բրեժնևը ԽՄԿԿ ԿԿ Գլխավոր քարտուղար: Բյուրոկրատական համակարգի ամրապնդումը: «Լճացման» փուլը Ռուսաստանում:	2	ՊԳ3, ՊԳ19
9.	Վերակառուցման քաղաքականությունը և ԽՍՀՄ փլուզումը:	Երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական ճգնաժամի խորացումը: Վերակառուցումը և նրա իրականացման դժվարությունները: Վերակառուցման քաղաքականության անդրադարձը Ռուսաստանի քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքի վրա: «500 օրերի» ծրագիրը և դրա ձախողումը: 1991թ. նախագահական ընտրություններում Բ. Ն. Ելցինի հաղթանակը: 1991թ. օգոստոսյան հեղաշրջման փորձի ձախողումը: ԽՍՀՄ փլուզումը և ԱՊՀ-ի կազմավորումը:	2	ՊԳ3, ՊԳ19
10.				
11.				
12.				
13.				
14.				
15.				

16.				
17.	Յու. Վ. Անդրոպովը և Կ. ՈԻ. Չեռնենկոն ԽՄԿԿ ԿԿ Գլխավոր քարտուղարներ:	Յու. Վ. Անդրոպովը և Կ. ՈԻ. Չեռնենկոն ԽՄԿԿ ԿԿ Գլխավոր քարտուղարներ: Անդրոպովի ներքին քաղաքականությունը:	2	ՊԳ3, ՊԳ19
18.				
19.				
20.				
21.				

**12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ**

h/h	Թեմա	Ուսումնասիրվող Հարցեր	Ժամաքանակ	Ստուգման ձևը	Գրականություն <sup>10</sup>
1.	Ստոլիպինի բարեփոխումները:	Ստոլիպինի ագրարային բարեփոխումը: Ստոլիպինի քաղաքականությունն ագրարային, ազգային, բանվորական հարցերի վերաբերյալ:	2	բանավոր	ՊԳ3, ՊԳ19
2.	Ռուսաստանի մասնակցությունն առաջին աշխարհամարտին:	Ռուսաստանի մարտական գործողություններն Առաջին համաշխարհային պատերազմում: Երկրի քաղաքական և տնտեսական դրությունը պատերազմի տարիներին:	2	բանավոր	ՊԳ3, ՊԳ19
3.	Ռուսաստանի հոգևոր կյանքը 19-րդ	Լուսավորությունն ու կրթությունը: Գիտությունը:	2	բանավոր	ՊԳ3, ՊԳ19

<sup>10</sup> Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն



	դարի վերջին-20-րդ դարի սկզբին:	Գրականությունը: Թատրոնը: Կինոն: Երաժշտությունը: Նկարչությունն ու քանդակագործությունը: Ճարտարապետությունը:			
	2-րդ կիսամյակ				
1.	ԽՍՀՄ-ի արտաքին քաղաքականությունը վերակառուցման ժամանակաշրջանում:	Հարաբերություններն Արևմտյան Եվրոպայի երկրների և ԱՄՆ-ի հետ: ԽՍՀՄ հարաբերությունները սոցիալիստական ճամբարի երկրների հետ:	2	բանավոր	ՊԳ3, ՊԳ19
2.	Ռուսաստանը հետխորհրդային շրջանում;	Ռուսաստանն անցման շրջանում: ՌԴ-ն որպես ԽՍՀՄ իրավահաջորդ: Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը: ՌԴ տնտեսական զարգացումը: Ռուսաստան-Բելոռուս դաշինքը 1996թ. ապրիլի 2-ին: Հայ-ռուսական հարաբերությունները:	2	բանավոր	ՊԳ3, ՊԳ19
3.	Ռուսաստանի գիտությունն ու մշակույթը XX դարում:	Գիտությունը: Կրթությունը: Գրականությունը: Թատրոնը: Կինոն: Երաժշտությունը: Նկարչությունն ու քանդակագործությունը: Ճարտարապետությունը:	2	բանավոր	ՊԳ3, ՊԳ19

### 12.3. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

h/h	Ինքնուրույն աշխատանքի թեմաները	Աշխատանքի տեսակը <sup>11</sup>	Ներկայացման ժամկետները	Ստուգման ձևը	Գրականություն <sup>12</sup>
-----	--------------------------------	--------------------------------	------------------------	--------------	-----------------------------

<sup>11</sup> Տես 7-րդ կետի հինգերորդ պարբերությունը

<sup>12</sup> Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

1.	Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին:	ռեֆերատ	Կիսամյակի ընթացքում	գրավոր	ՊԳ3, ՊԳ19
2.	Ռուսական պետականության զարգացումը. քաղաքական միապետությունից դեպի դումայական միապետություն:	ռեֆերատ	Կիսամյակի ընթացքում	գրավոր	ՊԳ3, ՊԳ19
	Ստոլիպինի բարեփոխումները:	ռեֆերատ	Կիսամյակի ընթացքում	գրավոր	ՊԳ3, ՊԳ19
	Ռուսաստանի մասնակցությունն առաջին աշխարհամարտին:	ռեֆերատ	Կիսամյակի ընթացքում	գրավոր	ՊԳ3, ՊԳ19
	Ռուսաստանի հոգևոր կյանքը 19-րդ դարի վերջին-20-րդ դարի սկզբին:	ռեֆերատ	Կիսամյակի ընթացքում	գրավոր	ՊԳ3, ՊԳ19
	Փետրվարյան հեղափոխությունը Ռուսաստանում:	ռեֆերատ	Կիսամյակի ընթացքում	գրավոր	ՊԳ3, ՊԳ19
	Քաղաքացիական պատերազմը և օտարերկրյա ինտերվենցիան:	ռեֆերատ	Կիսամյակի ընթացքում	գրավոր	ՊԳ3, ՊԳ19
	ԽՍՀՄ կազմավորումը	ռեֆերատ	Կիսամյակի ընթացքում	գրավոր	ՊԳ3, ՊԳ19
	Քաղաքական բռնությունները 30-ական թվականներին	ռեֆերատ	Կիսամյակի ընթացքում	գրավոր	ՊԳ3, ՊԳ19
